

ՀՏՇ 32.314.1

Հոգեբանություն

Կարինե Խաչատրյան
ԱրԴՀ մանկավարժության և հոգեբանության ամրիոնի ասպիրանտ
email: Karina_1318@mail.ru

ԵՐԵՔ ՏԱՐԵՎԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԻ ԴԵՏԵՐՄԻՆԱՏՆԵՐԸ
(ՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՉ)

Երեք տարեկանի ճգնաժամը համարվում է անձի հոգեսոցիալական զարգացման խիստ կարևոր շրջան: Ճգնաժամի ճիշտ հաղթահարումը կարևոր է ոչ միայն երեխայի հոգական-պահանջմունքային ոլորտի, այլև նրա հոգեկան զարգացման համար: Որո՞նք են այն առանցքային դետերմինանտները, որոնք ծովական են երեք տարեկանի ճգնաժամը: Այս հարցադրման կոնտեքստում՝ հիմք ընդունելով խնդրո առարկայի մասին գիտատեսական ուշագրավ տեսակետները, փորձ է արվել ներկայացնել երեք տարեկանի ճգնաժամի և դրա ունեցած ներգործության նկարագիրը:

Ճգնաժամի հաղթահարումն առնչվում է դաստիարակող բոլոր ինստանցիաների մշակված ու կիրառության մեջ դրված բոլոր այն նորմերի ու սկզբունքների պահպանման հետ, որի արդյունում երեք տարեկանը կարող է հաղթահարել կամ չհաղթահարել այն: Ճգնաժամի հաղթահարումը կարելի է կապել արժեհամակարգային ճիշտ դրդիչների, երեխայի վարքի ճիշտ դրդապատճառվածության հետ:

Բանալի բառեր-ճգնաժամ, երեք տարեկաններ, ինքնազնահատական, նորագոյացություն, ընդդիմություն, ինքնազիտակցություն, դետերմինանտ, ինքնակամություն, արժեզրկում, նեզատիվիզմ:

*Կարինե Խաչատրյան
Аспирант кафедра педагогики и психологии АрГУ*

**ДЕТЕРМИНАНТ ТРЕХЛЕТНЕГО КРИЗИСА
(ТЕОРЕТИЧЕСКИЙ АНАЛИТИЧЕСКИЙ ЭКСПЕРИМЕНТ)**

Кризис трехлетнего возраста считается крайне важным периодом духовно-социального развития личности. И правильное преодоление кризиса важно не только для эмоциональной сферы и потребностей ребенка, но и его духовного развития. Каковы те ключевые детерминанты, которые порождают кризис трехлетнего возраста? В контексте такой постановки вопроса, приняв за основу заслуживающие внимания научно-теоретические взгляды по данному вопросу, автором была сделана попытка представить картину кризиса трехлетнего возраста и оказываемого им воздействия.

Преодоление кризиса связано с соблюдением разработанных и введенных в применение всех тех норм и принципов занимающихся задачами воспитания инстанций, в результате которого трехлетний ребенок может преодолеть или не преодолеть его. Преодоление кризиса можно связать с правильными побудителями системы ценностей и правильной мотивированностью поведения ребенка.

Ключевые слова - кризис, трехлетние дети, самооценка, новообразование, возражение, самосознание, детерминант, своеование, обесценивание, негативизм.

*Karine Khachatryan
Postgraduate of Pedagogy
and Psychology Chair of ArSU*

**THE DETERMINANTS OF THREE-YEAR-CRISIS
(THEORETICAL ANALYTICAL EXPERIENCE)**

The three-year-crisis is considered to be a most important period of personal psychosocial development. The exact overcoming of crisis is important not only for child's sphere of emotions and requirements, but also for his psychological development. What are the key determinants which create three-year-crisis? In this statement of a question taking these scientific standpoints as a principal, we make an effort to present three-years-crisis and its description of influence.

The overcoming of crisis is dealing with the protection of all working out and putting into practice principals of the discipline of upbringing, in the result of which a three-years-child can overcome the crisis or not. The overcoming of crisis can be connected with the impulses of value system and the exact (right) motivation of child's behavior.

Keywords - crisis, three-year-old children, self-assessment, neoplasm, opposition, self-consciousness, determinant, self-will, depreciation, negativism.

Հասարակության բուռն փոխակերպումների և դրանից ածանցվող արժեքների ու նորմերի փոփոխությունների պատճառով մեր օրերում բավականին սուր է դրվում սերնդի դաստիարակության ու սոցիալականացման հարցը: Այս առումով, երեք տարեկանի ձգնաժամի ուսումնասիրությունը ավելի այժմեական է դառնում և պահանջում համակարգային ու ճիշտ մոտեցումներ, ինչի արդյունում կարող ենք հաջողությունների հասնել երեք տարեկանի ճիշտ սոցիալականացման գործընթացի կազմակերպման գործում:

Երեք տարեկան երեխան հետաքրքրասեր է, ջանասեր, էներգիայով լեցուն, անկախ և հաճախ հանդուզն: Նա սիրում է զբոսնել, վագել, երաժշտություն լսել, նկարել, կարդալ, գրել: <<Երեք տարեկանը զգայուն ժամանակաշրջան է խոսքի, կարգ ու կանոնի, երաժշտության, շնորհի ու քաղաքավարության, զգացմունքի, գրելու և կարդալու համար>>¹:

Երեք տարեկան երեխային բնորոշ է նաև մտավոր հասունացումը, զարգացող միտքը և զարգացող կամքը: Երեք տարեկանում երեխան սկսում է հասկանալ, որ նրա գաղափարները տարբեր են ուրիշներից, և ավելի ամբողջական ձևով է հասկանում, որ ուրիշները տարբեր են իրենից: <<Երեք տարեկանում երեխան հասնում է զարգացման այն մակարդակին, որտեղ նա կարող է ամբողջովին հնազանդվել կամ էլ չկատարել ոչ մի առաջադրանք>>²: <<Բացի եռանդուն և կենսուրախ լինելուց, երեք տարեկանները երբեմն հանդուզն են դառնում, երբ <<ոչ>> են ասում կամ պնդում են, որ կատարեն իրենց կամքը: Այս ժամանակաշրջանը հայտնի է որպես ընդդիմության ձգնաժամ անունով>>³: Ձգնաժամը սկսվում է, երբ երեխանները սկսում են ասել <<ոչ>> ծնողի համարյա ամեն մի առաջարկին կամ առաջադրանքին, որոնք ել ցույց են տալիս այն, որ նրանք կարողանում են արձագանքել շատ տարբեր, քան մեծերն են սպասում: <<Այս շրջանում նա ուզում է, որ հաշվի առնեն իր <<ես>>-ը և խորիրդակցեն իր հետ այն բոլոր հարցերի շուրջ, որոնք նրան են վերաբերում, օրինակ, նրա ուտելու, խմելու, հազնվելու և այլնի հետ>>⁴: <<Միևնույն ժամանակ փոխվում է երեխայի վերաբերմունքը իր և շրջապատող մարդկանց նկատմամբ, ձևավորվում է զարգացման սոցիալական նոր իրավիճակ, որին հարմարվելու ընթացքում է հենց ի հայտ է զայխ ձգնաժամը>>⁵: Իսկ թե ինչի՞ց է առաջանում երեք տարեկանի ձգնաժամը: Պետք է նշել, որ երեխայի օրգանիզմում կատարվում է ֆիզիկական և կենսաբանական վերակառուցում՝ փոխելով նրա վարքն ու բնավորությունը:

Երեք տարեկանի ձգնաժամը համարվում է անձի հոգեսոցիալական զարգացման խիստ կարևոր շրջան: O. U. Սոլոդիլովայի կարծիքով <<Երեք տարեկանի ձգնաժամը օնտոգենեզի էտապ է, որը երեխայի մոտ ուղեկցվում է անձնային նորագոյությունների կտրուկ և հիմնական փոփոխությունների և շրջապատողների հետ նոր հարաբերությունների հաստատման միջոցով: Այն դեպքում, երբ երեխան մարդկանցից ինքն իրեն առանձնացնում է և զիտակցում սեփական հնարավորությունները և ինքն իրեն զգում է <<կամքի աղբյուր>>, հանգեցնում է նրան, որ սկսում է իրեն համեմատել մեծերի հետ, ուզում է իրեն թույլ տալ օգտվել այն նույն իրավունքներից, որոնցից մեծերն են օգտվում, կատարել նույն գործողությունները, և իհարկե լինել մեծերի նման ինքնուրույն ու անկախ: Երբ երեխան իրեն <<կամքի աղբյուր>> է զգում, դա խոսում է իր ինքնըմբռնման զարգացման մասին: Երեք տարեկանում ձգնաժամ առաջանում է երեխայի անհատականության զարգացման որոշակի ձեռքբերումների արդյունքում: Ձգնաժամի վերապրումը հատկապես սրում է

¹ Maria Montessori. "The Absorbent Mind"

² Silvana Quattrocchi Montanaro. "Understanding the Human Being"

³ Tim Seldin. "How to Raise an Amazing Child the Montessori Way"

⁴ Tim Seldin. "How to Raise an Amazing Child the Montessori Way"

⁵ U. U. Խուլդոյան <<Անձի զարգացման ձգնաժամային տարիքը>>

երեխայի զգայունակությունը այլ մարդկանց հանդեպ, տվյալներում է ոչ միայն դրական շփման, այլև շրջապատից իրեն առանձնացնելու ձևերի ունակությունները: Սեփական կամքի ձևավորման ժամանակ առանձնացման և ռեֆլեքսային կարողությունները երեխային պատրաստում են այն բանին, որ նա անհատ դառնա>>¹:

Ա. Վալլոնը երեք տարեկանի ճգնաժամը կապում է անհատականացման գործընթացի հետ: <<Երեխան զգայուն է դառնում իր <<ես>>-ի նկատմամբ, ինքնահաստատման է ճգում, ուզում է ուշադրության կենտրոնում լինել: Երեխան դառնում է կոնֆլիկտային անձ, նա փորձում է նմանվել մեծերին, և միևնույն ժամանակ հաճախ է վիճում նրանց հետ, իր կամքն է թելադրում, և դրանով ինքնուրույնություն է դրսերում>>²:

Հարկ է անդրադարձնալ երեք տարեկանի ճգնաժամի կառուցողական ու ապակառուցողական կողմերին: Առաջինը բացասական է, ապակառուցողական, քանի որ <<Ճգնաժամը ընթանում է երեխայի բացասական հովզերի, զգացմունքների, վարքերի ուղեկցությամբ, որոնք կ շատ վտանգավոր են երեխայի հոգեկան զարգացման համար: Եվ արյունքն է անձի բացասական առանձնահատկությունների և մարդկային ոչ ճիշտ փոխհարաբերությունների ձևավորում և պահանջմունքների անբավարարվածությունը, որոնք կ առաջ են բերում հոգեկան զարգացման երկարատև ճգնաժամային վիճակ>>³: Երեխայի դիրքի փոփոխությունները, նրա ինքնուրույնության և ակտիվության աճը մեծահասակներից պահանջում են հարաբերությունների մշտական վերանայում ու վերակառուցում: Ս. Զարիխտնը ընդգծում է, որ <<երեք տարեկանը հետաքրքրասիրության և հարցասիրության տարիք է, քանի որ ամեն ինչ նոր և անհասկանալի է նրանց համար>>⁴: Եթե երեխայի հետ նոր հարաբերություններ չեն հաստատվում, նրա նախաձեռնողականությունը չի խրախուսվում, ինքնուրույնությունը անընդհատ սահմանափակվում է, ապա նրա մոտ առաջանում են ճգնաժամային երևույթներ, որոնք դրսերփում են մեծերի հետ հարաբերություններում: Իսկ ահա երեք տարեկանի դրական, կառուցողական ճգնաժամը, դառնում է դրական ազդանշան դրական փոփոխություններին, ինչի արդյունքում ձևավորվում են նոր մտավոր կառույցեր և զարգացման նոր սոցիալական իրավիճակներ: Հոգեկան և ֆիզիկական վարքի դրական փոփոխությունները կատարվում են ճգնաժամի նպաստավոր պայմաններում, որոնք կ նպաստում են երեխայի հոգեկան զարգացման հարմարվողական մակարդակի զարգացմանը:

Հաստ Վիզուտսկու և Էլվոնինի՝ <<ներքին հակասությունները մտավոր զարգացման ու փոփոխությունների միջև ուժն են, որոնք տեղի են ունենում այս տարիքում և որոնցից է կախված երեխայի հոգեկան զարգացման հետագա հտապների փոփոխությունները: <<Ես դա ինքս կարող եմ անել>> արտահայտությունը նշանակում է ոչ միայն տեսանելի հեղինակության, այլ միևնույն ժամանակ երեխայի՝ մեծից զատման, ինքնուրույնության դրսերում, որոնք շատ ժամանակ ծնողներին դրու չեն զայխ: Նրանք պատրաստ չեն տեսնելու, որ իրենց երեխան ինքնուրույն է և թույլ չեն տալիս, որ նա, օրինակ, հաց կտրի, ջուր լցնի, աթոռը տեղափոխի, հագնվի, գիրքը դնի գրադարակում, խաղալուց հետո խաղալիքները հավաքի և այլն: Այս ամենը հետազոտում երեխայի կյանքի համար կարող են վտանգավոր լինել և նպաստել ընտանիքում հակասությունների առաջացմանը>>⁵:

Ն. Աբրոսիմովան և Ա. Բոլոտովան հաստատեցին երեք տարեկանի ճգնաժամի հետևյալ ախտանիշները⁶:

¹ Солодилова О. П. “Шпаргалка по возрастной психологии” : учеб. пособие.— М.: ТК Велби, 2005. - 56 с.

² Валлон А. Психическое развитие ребенка. М., 1967. с.

³ Болотова А. К. и Молчанова О. Н., 2012. “Психология развития”, Яшкова Аксана Николаевна *Кризисы возрастного развития и психологическое здоровье в детском возрасте*, с.

⁴ Стивен Г., Счастливый ребенок, The Happy Child. Changing the Heart of Education First Sentient Publications edition 2002, с. 55

⁵ Выготский Л.С. Психология развития ребенка, Эльконин Д.Б. Детская психология, с.

⁶ Абросимова Н., “Возраст строптивости. О кризисе трёх лет” // Мама и малыш. — 2005. с. 473. Болотова А. К., и Молчанова О. Н., 2012. “Психология развития”, Москва: Государственный Университет Высшая Школа Экономики с: 528.

1. **Նեզատիվիզմ.** Երեխան նեզատիվ ռեակցիա է տալիս ոչ թե հենց գործողությանը, որ նա հրաժարվում է կատարել, այլ մեծահասակի պահանջին կամ խնդրանքին: Ընդհանրապես, նեզատիվիզմն ընտրողական է. երեխան անտեսում է ընտանիքի որևէ անդամի կամ դաստիարակի պահանջները, իսկ մյուսների հետ բավական լսող է: Իհարկե նեզատիվիզմը ձգնաժամային երևույթ է, որը պետք է անհետանա ժամանակի ընթացքում: Սոլոդիլովան հաստատեց, որ կարող է առաջանալ նեզատիվիզմ երեխայի անհատականության զարգացման որոշակի ձեռքբերումների արդյունքում, ինչպես նաև <<երբ երեք տարեկան երեխայի հետ վերաբերում են ինչպես մեկ տարեկանի հետ, և չեն թողնում, որ նա ինքնուրույնություն ձեռք բերի>>: Բայց այն, որ երեք տարեկանում երեխան հնարավորություն է ստանում գործելու ոչ թե պատահականորեն ծագած ցանկության ազդեցությամբ, այլ գործել ուրիշ՝ ավելի բարդ և կայուն դրդապատճառների ազդեցությամբ, զարգացման կարևորագույն ձեռքբերում է:

2. **Ինքնակամություն - <<Ես>>** համակարգի ձևավորման հետ կապված՝ բնականաբար, շատ վառ կերպով դրսնորվում է ինքնուրույնության տևնդենց, և երեխան ցանկանում է ամեն ինչ ինքնուրույն անել: Սկզբունքորեն դա դրական երևույթ է, սակայն երեխայի ձգտումը ամեն ինչ անել ինքնուրույն հաճախ աղեկված չէ նրա հնարավորություններին և առաջացնում է հավելյալ կոնֆլիկտներ:

3. **Համառություն.** Սա երեխայի ինչ-որ բան պնդելու ռեակցիան է, որով ավելի շատ ոչ թե պնդում է իր ցանկությունը, այլ պահանջում մեծահասակներից, որ իր կարծիքը հաշվի առնեն: Երեխայի առաջնային որոշումը պայմանավորում է նրա ամբողջ վարքը, և հրաժարվել այդ որոշումից անզամ փոփոխվող իրավիճակներում, երեխան չի կարող:

4. **Կամակորություն.** Այս ախտանիշը ուղղված է ոչ թե կոնկրետ մեծահասակի դեմ, այլ վառ մանկությունում հաստատված հարաբերությունների ողջ համակարգի և ընտանիքում ընդունված դաստիարակության նորմերի դեմ: Երեխան պնդում է իր ցանկությունները և դժգոհում նրանից, թե ինչ են առաջարկում և անում ուրիշները:

5. **Արժեզրկում.** Երեք տարեկանի ձգնաժամի հետաքրքիր ախտանիշը է արժեզրկումը, հետաքրքրության կորուստը, բողոքները ու գանգատները, որոնք արտահայտվում են ծնողների հետ հերթական վեճերի ու կոնֆլիկտների ժամանակ: Երեխայի աշքերում արժեզրկվում է այն, ինչը սովորական, հետաքրքրի, բանկ է եղել նախկինում: Բոլոր այս երևույթները վկայում են, որ նրա մոտ փոխվում է վերաբերմունքը այլ մարդկանց և ինքն իր նկատմամբ, և երեխան հոգերանորեն առանձնանում է մտերիմ մեծահասակներից:

6. **Բռնակալություն.** Եթե ընտանիքում կա մեկ երեխա, այն դրսնորվում է որպես իշխանության ձգուում. ընտանիքի բոլոր անդամները պետք է անեն այն, ինչ ինքն է ցանկանում, իսկ բազմազավակ ընտանիքներում բռնակալությունը դրսնորվում է խանդի ձևով:

7. **Բռողք-կրիվ.** դրսնորվում է այն դեպքում, երբ երեխան մշտական կոնֆլիկտների մեջ է մտնում շրջապատղների և հատկապես իր ծնողների հետ տարրեր հարցերի շուրջ, նա ամեն ինչից բռողքում է, նրան ոչինչ չի գոհացնում, ինչն էլ հանգեցնում է կոնֆլիկտների:

Ուշագրավ է նաև երեք տարեկանի ձգնաժամի մասին Գամեզոյի տեսակետը, որը կրկին ընդդիմություն է ենթադրում. <<համառություն, գործողությունների արդյունքների կանխատեսում, ինքնուրույնության ձգուում, ուժեղ ռեակցիա հաջողության նկատմամբ, ուժեղ աֆեկտիվ ռեակցիա իր հասցեին ուղղված յուրաքանչյուր հանդիմանության նկատմամբ>>¹: Իսկ ահա Կ. Ն. Պոլիվանովան նշում է երեք տարեկանի <<Ես>>-ի հայտնաբերման մասին. <<Երեխայի խոսքում ի հայտ են գալիս <<Ես>>, <<ուզում եմ>>, <<Ես չեմ ուզում>> արտահայտությունները, սեփական <<Ես>>-ի բացահայտումը տեղի է ունենում հակադրմամբ, երեխան ինքն է ստեղծում իրավիճակներ, որտեղ հայտնաբերվում է <<Ես>>-ը....>>²:

Գիտատեսական նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ երեք տարեկանը հոգեկան զարգացման զգայուն (փխրուն) ժամանակաշրջան է, որտեղ նորմալ և թույլ զարգացման զիջը շատ նեղ է, և թե ինչ ուղղությամբ կրնթանա այն, հաճախ կախված է երեխայի հետ

¹ Гамезо М. В., Петрова Е. А., Орлова Л. М. Возрастная и педагогическая психология: Учебное пособие для студентов всех специальностей педагогических вузов. — М.: Педагогическое общество России, 2003

² Поливанова К. Н., “Психология возрастных кризисов”: Учеб. пособие для студ. высш. пед. заведений. - М.: Издат. центр, 2000. - 184 с.

շրջապատող անձանց փոխազդեցության արդյունավետությունից, երեխայի տարիքային ճգնաժամի ընթացքի յուրահատկությունից և հատկապես ընտանիքի անդամների դերերից: Երեխան ակտիվորեն ձանաշում է իրեն շրջապատող առարկաների աշխարհը, յուրացնում ու նվաճում այն մեծահասակների գործողությունների միջոցով և նրանց հետ որոշ գործողություններ կատարելով: Երեք տարեկանի ճգնաժամը փոխում է երեխային և նրա զարգացման գործընթացի շատ կարևոր շրջան է: Երեք տարեկանում երեխան հատկապես զգայուն է մարդկային հարաբերությունների ընկալման նկատմամբ, քանի որ փոխում է սեփական ընկալումը աշխարհի և իր հարաբերությունների նկատմամբ: Այս տարիքի երեխաները սպասում են, որ ընտանիքի անդամները ընդունեն իրենց անկախությունն և ինքնուրույնությունը: Նրանք ցանկանում են, որ իրենցից հարցնեն, խորհրդակցեն իրենց հետ: Նրանք փորձում են ամեն գնով հասնել ինքնուրույնության և ինքնահաստատվել հաղթանակի մեջ, նույնիսկ եթե դա բերում է կողմիկականի: Այստեղ շատ կարևոր է ընտանիքի և շրջապատող մարդկանց ազդեցությունը, քանի որ երեխան, ցանկանալով իրեն պահել ինչպես մեծահասակ, առաջին հերթին օրինակ է վերջնում իր շրջապատողներից:

Ճգնաժամի առանցքային դետերմինանտ (պատճառահետևանքային հարաբերությունները վարքի հետ) կարելի է համարել <<ես ինքս>> գիտակցություն՝ այս փուլի կենտրոնական նորագոյացությունը, որը կապված է ընթացքում առաջացող խիստ բարձր հուզական ինքնազնահատականի հետ: Առաջ են զայս արարքներ՝ կապված ոչ թե անմիջական իրավիճակային ցանկությունների, այլ երեխայի <<ես>>-ի դրսուրման հետ:

<<Հուզական ինքնազնահատկան>>, <<ընդգծված ես>>. Ծնողներն ու դաստիարակները ճգնաժամի հաղթահարումը պետք է կապեն՝ հիմնվելով այս երկու կարևոր նորագոյացությունների վրա:

Երեխայի հուզական-պահանջմունքային ոլորտի զարգացումը սերտ կապված է այս ժամանակ ծագած ինքնազնահակցության հետ, քանի որ այս տարիքում երեխան սկսում է ինքն իրեն գիտակցել որպես մարդ: Ինքն իրեն ձանաշումը համարվում է ինքնազնահակցության առաջնային ձև: Ինքնազնահակցության զարգացման նոր փուլը սկսվում է այն ժամանակ, եթե երեխան անվանում է ինքն իրեն սկզբում անունով, հետո՝ երրորդ դեմքով: Ինքնազնահակցությունից հետո, երեխան փորձում է հասկանալ, թե ինչ է նշանակում լինել մարդ, ուսումնասիրում է մեծերի վարքը, ընդօրինակում մեծերին: Այսուհետո երեք տարեկանում օգտագործվում է <<ես>> դերանունը: Ավելին, երեխայի մոտ առաջանում է ինքնազնահատականը, ես լավն եմ, կամ վատն եմ, ընդ որում չափազանց բարձր: Ինքնազնահատականը հուզական կազմավորում է, որը չի պարունակում ռացիոնալ բաղադրիչներ: Այս հիմնվում է երեխայի՝ հուզական անվտանգության, ընդունման պահանջմունքի վրա համար ել հիմնականում առավելազույն բարձրացված է, որի համար երեխան անընդհատ փորձում է իրեն ձանաշել մեծահասակների արձագանքներում: Այդ պատճառով երեխայի համար մեծագույն նպատակ է դառնում մեծահասակների կողմից ընդունված և սիրված լինելը: Երեխաները, որոնք բացասականորեն են ընդունվում մեծերի կողմից, ունեն ցածր ինքնազնահատական, իսկ այն երեխաները, որոնք սիրված են և ընդունված են հատկապես ընտանիքում, ունենում են բարձր ինքնազնահատական: Սակայն երեխան երեխան, համեմատելով իրեն մեծերի հետ, իրեն լիարժեք մարդ չի համարում, ի հայտ է զայս այսպես կոչված անլիարժեքության բարդույթը: Ըստ Ալֆրեդ Ադերի, ինց այս անլիարժեքության բարդույթի հաղթահարման համար է մարդն ամբողջ կյանքում ձգտում ինքնահատակվել, ապացուցել ուրիշներին, որ ինքը լավն է:

Սուխինան¹ այս տարիքի հիմնական նորագոյացությունները համարել է սեփական ես-ի առանձնացումը միջավայրից և իր անձի համեմատումը ուրիշների հետ: Նա նշում է, որ երեխան ունի սիրված լինելու և հավանության արժանանալու ձգտում և պահանջմունք, եթե երեխան սիրո չի արժանանում, նա կորցում է ինքնազնահատակությունը, նրա մոտ առաջանում է օտարում վախի ձևով, նա զգում է իրեն լրված և միայնակ: Նման իրավիճակներում երեխան կարող է խորը հոգեկան ապրումներ ունենալ և սա նույնպես կարող է ճգնաժամի արիթ հանդիասանալ:

¹ Мухина В. С., “Возрастная Психология: Феноменология развития, детство, отрочество”, 4-е издание, стереотипное Москва, ACADEMIA 1999. - 496 с.

Կարծում ենք, որ Ճգնաժամի հաղթահարումն առնչվում է դաստիարակող ինստանցիաների մշակած ու կիրառության մեջ դրված բոլոր այն նորմերի ու սկզբունքների պահպանման հետ, որի արդյունում երեք տարեկանը կարող է հաղթահարել կամ չհաղթահարել այն: Ճգնաժամի հաղթահարումը կարելի է կապել արժեհամակարգային ձիշտ դրդիչների, երեխայի վարքի ձիշտ դրդապատճառվածության հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Խուրդոյան Ս. Ս. <<Անձի զարգացման ճգնաժամային տարիքը>>, Երևան <<Զանզակ-97>>, 2004թ. -248
2. Абросимова Н., “Возраст строптивости. О кризисе трёх лет” // Мама и малыш. — 2005. с. 473
3. Болотова А. К., и Молчанова О. Н., 2012. “Психология развития”, Москва: Государственный Университет Высшая Школа Экономики с: 528.
4. Валлон А., “Психическое развитие ребенка”. М., 1967.
5. Выготский Л.С., “Психология развития ребенка”, Издательство: Смысл, М. 2005+
6. Гамезо М. В., Петрова Е. А., Орлова Л. М. “Возрастная и педагогическая психология”: Учебное пособие для студентов всех специальностей педагогических вузов. — М.: Педагогическое общество России, 2003
7. Мухина В. С., “Возрастная Психология: Феноменология развития, детство, отчество”, 4-е издание, стереотипное Москва, ACADEMIA 1999. - 496 с.
8. Поливанова К. Н., “Психология возрастных кризисов” : Учеб. пособие для студ. высш. пед. заведений. - М.: Издат. центр, 2000. - 184 с.
9. Солодилова О. П., “Шпаргалка по возрастной психологии” : учеб. пособие.— М.: ТК Велби, 2005. — 56 с.
10. Стивен Г., “Счастливый ребенок The Happy Child”. Changing the Heart of Education First Sentient Publications edition 2002, с. 55
11. Эльконин Д. Б., “Детская психология” М.: Академия, 2007. — 384 с.
12. Яшкова Аксана Николаевна “Кризисы возрастного развития и психологическое здоровье в детском возрасте”, 2012; 18:95-100
13. Maria Montessori. “The Absorbent Mind”, Madras. The Theosophical Publishing House, pp. 455
14. Silvana Quattrocchi Montanaro. “Understanding the Human Being”, 1991, ABC-CLIO Ltd, pp. 168
15. Tim Seldin. “How to Raise an Amazing Child the Montessori Way” DK; 11/18/06 edition (December 18, 2006). pp. 192.